# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-6-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Տիգրան Գաբրիելյան
   ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

2. **ԳՈՐԾՈՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**
   Իրանի Իսլամական Հանրապետություն (ք. Ջուլֆա)
   2024 թվականի մարտի 4-6-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԻԻՀ շրջակա միջավայրի կազմակերպություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն Արաքս սահմանային գետի աղտոտման ուսումնասիրման և մշտադիտարկման համատեղ 25-րդ նիստի արձանագրության կետերի կատարումն ապահովելու նպատակով նախատեսվող երկու երկրների պատվիրակությունների ղեկավարների և փորձագիտական խմբերի առաջին հանդիպմանը:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

2023 թվականի նոյեմբերի 15-16-ը Երևանում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի և ԻԻՀ շրջակա միջավայրի կազմակերպության ղեկավարի տեղակալի գլխավորությամբ տեղի ունեցավ Արաքս սահմանային գետի աղտոտվածության ուսումնասիրման և մշտադիտարկման համատեղ 25-րդ նիստը, որի ընթացքում քննարկվեցին Արաքս գետի աղտոտվածությանն առնչվող հարցեր:

Նիստի ընթացքում ստորագրվել է արձանագրություն՝ համաձայն որի կողմերը պայմանավորվեցին վերսկսել Արաքս սահմանային գետի ուսումնասիրման և մշտադիտարկման համատեղ մոնիթորինգային խմբի աշխատանքները նոր ձևաչափով՝ աշխատանքներին ընդգրկելով նաև երկու երկրների շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներին: Կողմերը ձեռք բերեցին պայմանավորվածություն ստեղծել երեք փորձագիտական խումբ (Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի խումբ,

հանքարդյունաբերության՝ մասնավորապես պղնձի և մոլիբդենի ոլորտի հարցերով զբաղվող մասնագիտական խումբ և մոնիթորինգի ու վերահսկողության խումբ)՝ համատեղ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Այդ ուսումնասիրությունները նպատակ ունեն մեկ տարվա ընթացքում նվազեցնել և վերացնել Արաքս սահմանային գետի աղտոտվածության խնդիրը:

Հայկական կողմից պատվիրակության կազմում ընդգրկվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ներկայացուցիչներ:

25-րդ նիստի արձանագրության 6-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով՝ ս.թ. մարտի 4-ից 6-ը ՀՀ Ագարակ և ԻԻՀ Ջուլֆա քաղաքում տեղի ունեցավ երկու երկրների պատվիրակությունների ղեկավարների և փորձագիտական խմբերի առաջին հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին մասնագիտական խմբերի գործունեությանն առնչվող հարցեր՝ հետագա քայլերը կանխորոշելու համար:

2024 թվականի մարտի 4-ին շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կոմբինատ) ղեկավարության և իրանական պատվիրակության անդամների հետ շրջայց է կատարվել Կոմբինատի տարածքում, որի ընթացքում իրանական կողմը ծանոթացել է իրենց հետաքրքրող բոլոր արտադրական գործընթացներին՝ մասնավորապես բաց լեռնային աշխատանքներին, հարստացման ֆաբրիկայի աշխատանքներին, բոլոր երեք պոչամբարիներում տղմալցման գործընթացներին, ջրի փակ շրջանառու համակարգին, ինչպես նաև Արաքս գետից, ստորերկրյա հորերից և արտաքին այլ աղբյուրներից կատարվող ջրառի համակարգին: Այցի արդյունքում իրանական կողմը գոհունակությամբ հավաստիացրել է, որ ծանոթացել են այդ պահին իրենց հետաքրքրող բոլոր արտադրական գործընթացներին:

Մարտի 5-ին ԻԻՀ Ջուլֆա քաղաքում մեկնարկեցին երկու երկրների փորձագիտական երեք խմբերի (Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի խումբ, հանքարդյունաբերության՝ մասնավորապես պղնձի և մոլիբդենի ոլորտի հարցերով զբաղվող խումբ և մոնիթորինգի ու վերահսկողության համատեղ խումբ) աշխատանքային քննարկումները, որոնք տեղի ունեցան զուգահեռաբար:

Մինչ աշխատանքային քննարկումները մեկնարկելը՝ ողջույնի իր խոսքում ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը երախտագիտություն է հայտնել Իրանի Իսլամական Հանրապետության շրջակա միջավայրի կազմակերպությանը շարունակական և արդյունավետ համագործակցության համար, անդրադարձել հայ-իրանական բարեկամական հարաբերություններին, ինչպես նաև շնորհակալություն հայտնել ԻԻՀ իր գործընկերոջը կազմակերպած հանդիպման և ջերմ ընդունելության համար:

ԻԻՀ շրջակա միջավայրի կազմակերպության ղեկավարի տեղակալ Իրաջ Հեշմաթին իր խոսքում շնորհակալություն հայտնեց գործընկերոջը Կոմբինատ այցելությունը կազմակերպելու հարցում ցուցաբերած պատրաստակամության և համատեղ փորձագիտական աշխատանքային խմբերի քննարկումները կյանքի կոչելու համար:

*Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի խմբի* քննարկումներին մասնակցում էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիայի մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի ծառայության մակերևութային ջրերի որակի դաշտային հետազոտությունների և նմուշառումների բաժնի պետ Տիգրան Առաքելյանը և միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ Կարեն Հովհաննիսյանը:

Քննարկվեց դեռևս 2023 թվականին շրջակա միջավայրի նախարարության կողմից ԻԻՀ գործընկերներին փոխանցված Արաքս սահմանային գետի ջրի որակի հայ-իրանական համատեղ մոնիթորինգի առաջարկվող ծրագրի նախագիծը, որում մանրամասն ներկայացված էին մոնիթորինգային աշխատանքների վերսկսման մեխանիզմները, համատեղ հանդիպումների ժամանակացույցը և մոնիթորինգի տեսակները՝ ջրի որակի, հատակային նստվածքների և հիդրոկենսաբանական:

Իրանական կողմի առաջարկով կողմերը համաձայնեցին մոնիթորինգի ծրագրում չներառել հիդրոկենսաբանական մոնիթորինգը՝ Արաքսի գետի արագահոսության և ափամերձ հատվածների վտանգավորության պատճառով:

Նմուշառման կետերի հետ կապված իրանական կողմն առաջարկեց ծրագրում ներառված երեքական դիտակետին ավելացնել ևս երկուական կետ՝ (հայկական կողմ՝ AMS-A 38° 52′ 13.1″, 46° 14′ 14.8″, AMS-B 38° 52′ 31″, 46° 14′ 54.6″ և հանդիպակաց իրանական կողմ՝ IMS-A 38° 52′ 12.6″, 46° 14′ 17.2″, IMS-B 38° 52′ 26″, 46° 14′ 52″) ըստ իրենց պարզաբանման այդ հատվածներից դեպի Արաքս գետը կեղտաջրերի արտահոսքի առկայության պատճառով:

Այս կետերի ավելացման հետ քննարկումները տևեցին բավական երկար, քանի որ առաջարկվող կետերը հայկական կողմից չունեին հասանելիություն՝ ՌԴ սահմանապահ զորքերի հսկողության հատվածում դարպաս չլինելու պատճառով: Բացի այդ, ծրագրում առկա երեք կետերը լիովին արտացոլում են Արաքս գետի ջրի որակի փոփոխությունները հայ-իրանական սահմանի հատվածում: Հարկ եմ համարում նշել, որ դեռևս 2005 թվականից սկսված մոնիթորինգի ծրագրում ևս դիտակետերի քանակը շատ էր, ինչը երկարամյա մոնիթորինգի և ստացված տվյալների արդյունքում հենց իրանական կողմի առաջարկով աստիճանաբար կրճատվեց:

Իրանական կողմն առաջարկում էր այդ հատվածում նմուշառում կատարել իրանական սահմանային հատվածից հայկական սահմանային հատված նավակով մոտենալու տարբերակով: Իրանական կողմի առաջարկը դաշտային պայմաններում անիրագործելի է, քանի որ Արաքս գետը տվյալ հատվածում արագահոս է և վտանգավոր ուղղահայաց նավարկման համար:

Չնայած հայկական կողմի բերված մասնագիտական և գործնական փաստարկներին՝ իրանական կողմը, այնուամենայնիվ, պնդեց այդ երկու կետերը ներառել ապագա մոնիթորինգի ծրագրում և այն ներառվեց առանձին հավելվածում որպես հավելյալ «առաջարկվող նմուշառման կետեր»:

Հաջորդ քննարկման հարցը նմուշառման հաճախականությունն էր՝ հայկական կողմն առաջարկեց համատեղ նմուշառումներն իրականացնել սեզոնային հաճախականությամբ տարեկան երեք անգամ, իսկ մնացած ամիսներին յուրաքանչյուր կողմն առանձին:

Նիստի ընթացքում հայկական կողմը իրանական կողմին թղթային տարբերակով ներկայացրեց նմուշառումների իրականացման ժամանակացույցը, ըստ որի համատեղ նմուշառումներն առաջարկվում էր իրականացնել 2024 թվականի ապրիլի 16-ին, օգոստոսի 19-ին և հոկտեմբերի 17-ին, իսկ մնացած ամիսներին յուրաքանչյուր կողմն առանձին սակայն համաժամանակյա: Այս կետի հետ կապված ևս քննարկումները տևեցին երկար, քանի որ իրանական կողմն առաջարկեց համատեղ նմուշառումներն իրականացնել ամենամսյա հաճախականությամբ՝ ջրի որակի վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում ունենալու պատճառաբանմամբ:

Հայկական կողմն այս կետի հետ կապված ներկայացրեց, որ իրանական կողմի ամենամսյա մուտքի կազմակերպման հարցերը պետք է ճշգրտվեն և/կամ համաձայնեցվեն ՌԴ սահմանապահների հետ, ուստի չի կարող ներառվել ծրագրում: Սակայն իրանական կողմը պնդեց, որ հայկական սահման մուտք գործելը կապահովվի իր կողմից: Կողմերը համաձայնության եկան, որ իրանական կողմը իր ընթացակարգով հայկական կողմից կիրականացնի ամենամսյա նմուշառում: Ամենամսյա նմուշառման վերաբերյալ տվյալները կողմերը միմյանց կփոխանցեն կոնտակտային անձերի միջոցով, իսկ պաշտոնապես կփոխանակվեն եռամսյակային հանդիպումներում թիմի ղեկավարների ներկայությամբ:

Կողմերը նաև պայմանավորվեցին, որ եռամսյակային հանդիպումների ժամանակ միմյանց կփոխանցեն «անհայտ» բաղադրության սինթետիկ ջրի նմուշ (միջլաբորատոր ստուգաճշտման նմուշ՝ տրված այդ լիազորությունը ունեցող լաբորատորիայի կողմից):

*Հանքարդյունաբերության հարցերին վերաբերող աշխատանքային խմբի* կազմում հայկական կողմից ընդգրկված էին ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի պարտականությունները կատարող Կարեն Գասպարյանը և ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետ Սուրեն Մամյանը:

Աշխատանքային խմբի քննարկման ժամանակ իրանական կողմի ներկայացուցիչները հայտնեցին, որ Կոմբինատ կատարված այցի արդյունքում առանձնացրել են տասը կետ, որոնց շուրջ ցանկանում են կազմակերպել քննարկումներ:

Հայկական կողմի ներկայացուցիչները հայտնեցին, որ տվյալ կետերը անմիջական առնչություն չունեն Արաքս գետի աղտոտվածության հետ և հիմնականում հանդիսանում են ներկոմբինատային կոմերցիոն խնդիրներ, ուստի տվյալ կետերը չեն կարող ամրագրվել կնքվելիք արձանագրության մեջ: Իրանական կողմը հիմնականում համաձայնեց հայկական կողմի հետ և նշվեց, որ տվյալ կետերը առանձին գրությամբ դիվանագիտական ուղիներով կփոխանցվի հայկական կողմին՝ որպես առաջարկ Կոմբինատի հետ քննարկելու նպատակով:

Սակայն, երբ քննարկվում էր ստորագրման ենթակա վերջնական փաստաթուղթը իրանական կողմը տվյալ կետերը ներառել էր արձանագրության մեջ որպես առաջարկ, ինչը հայկական կողմից չընդունվեց: Իրանական կողմը համաձայնեց հայկական կողմի այն առաջարկի հետ, որ արձանագրության մեջ գրվի միայն այն մասին, որ իրանական կողմը հայկական կողմին հետագայում կներկայացնի իր առաջարկները: Սակայն քննարկման ավարտին իրանական կողմը պնդում էր, որ տվյալ տասը կետերը ամրագրվեն ստորագրման ենթակա արձանագրության հավելվածում: Հայկական կողմը վերջինիս հետ չհամաձայնեց, հիմնավորելով, որ այն հանդիսանում է արձանագրության մաս: Աշխատանքային խմբի շրջանակներում քննարկվող Արաքս գետի աղտոտվածության հետ կապ չունեցող հարցերը ենթական չեն ամրագրման արձանագրության ու դրա մասը կազմող հավելվածներում:

*Վերահսկողության և մոնիթորինգի խմբի* աշխատանքերին ներգրված էին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վրեժ Գալոյանը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազգեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը: Աշխատանքային խմբի քննարկման առարկա էր դարձել ԻԻՀ ներկայացուցիչների առաջարկությունը առ այն, որ տեսախցիկներ տեղադրվեն իրանական կողմում, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվեր Կոմբինատի վնասակար նյութերի արտահոսքը դեպքի Արաքս գետ արձանագրելու համար:

Հայկական կողմը առարկություն չի ունեցել իրանական կողմում տեսախցիկներ տեղադրելու հարցին:

Իրանական կողմն առաջարկում էր պատահարների դեպքում կապի միջոցով օպերատիվ տեղեկատվությունը ներկայացնել հայկական կողմի պատասխանատուին, որից հետո շատ կարճ ժամանատահատվածում կողմերը կլինեին վթարի վայրում՝ պատահարը և դրա հետևանքները պարզելու նպատակով:

Ի պատասխան այս առաջարկին հայկական կողմը նշեց, որ հեռախոսային կամ ինտերնետ կապի այլ միջոցներով արձանագրված խախտումները ներպետական ընթացակարգով հնարավորություն չեն տալիս վերահսկողական գործառույթներ իրականացնել Կոմբինատում և առաջարկեց, որ այդ տեղեկատվությունը փոխանցեն դիվանագիտական ուղիներով: Ինչպես նաև հնարավոր չի ապահովել օպարատիվությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումը գտնվում է Կապան քաղաքում:

Այնուամենայնիվ, ծավալված քննարկումներից հետո իրանական կողմը համզվեց այն փաստի հետ, որ իրենք ևս չեն կարող ապահովել օպերատիվությունը:

## 6. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ընթացքում կողմերի միջև համաձայնություն ձեռք չի բերվել և փաստաթուղթ չի ստորագրվել:

## 7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔԸ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման արդյունքում համաձայնություն ձեռք չբերվեց և իրանական կողմին առաջարկվեց արձանագրության իրենց նախագիծը դիվանագիտական ուղիներով փոխանցել հայկական կողմին, իսկ հայկական կողմը կտրամադրի դրա վերաբերյալ դիրքորոշում կամ արձանագրության հայկական կողմի մշակած նախագիծը:

Հայկական կողմը հատուկ ցանկանում է շեշտել, որ նմանատիպ հանդիպումներին (հատկապես Իրանի Իսլամական Հանրապետության հետ քննարկվող թեմաներում) իրենց մասնակցությունը բերեն ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները, քանի որ կան հարցեր, որոնք տեղում պահանջում են դիվանագիտական լուծումներ: ԱԳՆ-ից ստացել էինք հավաստիացում, որ հանդիպումներին կմասնակցի Իրանում ՀՀ դեսպանության 2-րդ քարտուղար Գարիկ Գրիգորյանը (Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի փետրվարի 29-ի N1/08.3/2342-2024 թվակիր գրություն), սակայն հանդիպման նախօրեին տեղեկացնում են, որ փաստաթղթերի հետ կապված խնդրի պատճառով դիվանագետը չի կարող ներկա գտնվել նիստերին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ նմանատիպ հանդիպումներին թարգմանչական բարձրակարգ ծառայությունը և անկողմնակալությունը բանակցությունների հաջող ընթացքի գրավականն է:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Տիգրան Գաբրիելյան
13.03.2024թ.